Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *<Սովորողի ձևավորող գնահատումը հայտորոշիչ թեստի և <Մենդվիչի> մեթոդով>*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՄՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *Ռուզան Ղուկասյան*

ԴՊՐՈՑ *<<Վերին Գետաշենի թիվ 2 մ/դ >>*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……..5

3. <Սենդվիչ> մեթոդի կիրառությունը.....8

4.Փորձարարական հետազոտություն……10

4.1.Խմբի նկարագիրը…….....……10

4.2.Փորձարարական դասեր…….....……10

4.2.1.Փորձարարական դաս-1…….....……..10

4.3.2.Փորձարարական դաս-2…… .....……11

4.Վերլուծություն…….....……13

5.Գրականության ցանկ…….....……15

6.Հավելված……16

1.Դասապլան-1……16

2.Դասապլան-2……20

1.Ներածություն

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողի ձևավորող գնահատումը հայտորոշիչ թեստի և <Սենդվիչի> մեթոդով։Հետազոտական աշխատանքս գրում եմ փորձարկված աշխատանքի հիման վրա։ Իրականացրել եմ Վերին Գետաշենի թիվ 2 մ/դ-ում։

Օտար լեզուները մայրենի լեզվի հետ միասին կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որոնք շփման և հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության կարևորագույն միջոցն են:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզուն՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը:

Օտար լեզուների ուսուցման **հիմնական հեռանկարային նպատակը** սովորողներին բազմազդ և բազմամշակույթային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է:Քանի որ միջին դպրոցում աշակերտների համար մի փոքր

դժվար է ամբողջովին յուրացնել օտար լեզվի ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար, այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ դասաժամերին այդ աշակերտների համար կիրառել տարբերակված ուսուցում մեթոդը՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը անգլերենի դասաժամերին: Այն աշակերտները, որոնք հետ են մնուն կրթական ծրագրերից և ունեն խնդիր դասապրոցեսին մասնակցելու՝ նրանց կաշտատենք անհատական տեսքստային առաջադրանքների վրա՝ զարգացնելով ճիշտ գրելու հմտություններ, ճիշտ արտասանություն և կցուցաբերեն հետաքրքրություն առարկայի հանդեպ:

2.Գրական ակնարկ

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նոր չափորոշիչներով առաջարկվում է որոշակի փոփոխություններ մտցնել կրթական համակարգի գնահատման մեջ, որով ակնկալվում է բարձրացնել կրթական մակարդակը:

Հետազոտության նպատակն է՝

- -ուսումնասիրել նոր չափորոշիչային գնահատման կողմ և դեմ կարծիքները -բացահայտել ձևավորող գնահատականի առավելությունները և հետադարձ կապի արդյունավետությունը
- -պարզել ձևավորող գնահատականի ազդեցությունը կրթության որակի վրա:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու

դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ

Գոյություն ունեն գնահատման երկու փոխկապակցված ձևեր ընթացիկ ձևավորող գնահատում և ամփոփիչ միավորային գնահատում

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա:

Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատականը, իսկ ձևավորող գնահատմման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա:

Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի: Գնահատմամբ պարզվում է սովորողների կողմից առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակն է՝

-սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը,

-արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը,

-գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքանզարգացմանը

Նախնական հայտորոշման ժամանակ ստուգվում են ընդհանրական գիտելիքներն անցած թեմաներից, բարդության աստիճանը պետք է լինի պարզից բարդ, իսկ տևողությունը երկար /համեմատած ընթացիկ հայտորոշման/:

Ուսումնառությունից հետո կիրառվում է ընթացիկ կանխորոշումը, այս դեպքում ստուգվում է մեկ կամ ամենաշատը երկու հիմնական գիտելիք, առաջադրանքներն ունեն որոշակի ուղղվածություն և վերաբերում են նույն թեմային, բարդության աստիճանը պետք է լինի պարզից միջին, այնպես որ սովորողների մեծ մասի կողմից թեստը հաղթահարվի , աշխատանքների ձևը բխում է տվյալ թեմայի ուսուցման նպատակից, իսկ տևողությունը համապատասխանաբար կարճ է ՝ ամենաշատը 15 րոպե:

Եվ ընթացիկ, և նախնական հայտորոշիչ թեստերի հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի: Կարելի է օգտագործել տարբեր տիպի առաջադրանքներ՝ բազմակի ընտրություն, լրացում, կարճ պատասխաններով առաջադրանքներ և այլն: Հայտորոշիչ թետը հանգեցնում է ուսումնառության բարելավմանը:

Ձևավորող գնահատման կարևորագույն բաղադրիչներից է հետադարձ կապը , այն անմիջապես հաջորդում է ընթացիկ հայտորոշմանը:

Հետադարձ կապի միջոցով պարզում ենք թե յուրաքանչյուր սովորողն ինչպես է ընկալել և յուրացրել նյութը, ինչ հաջողություններ և բացթողումներ ունի ուսումնառության ընթացքում: Հետադարձ կապը ուսուցման գործընթացում սովորողների և ուսուչցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է:

Հետադարձ կապի նպատակը սովորողների ուսումնառության առկա մակարդակի ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է, այսինքն՝ հետադարձ կապի համար ընտրված միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու , իր ձեռքբերումները խորացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին: Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ-սովորող, սովորղուսուցիչ և սովորող-սովորող կապերը: Ուսուցիչը և սովորողները միմյանց

կատարագործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլություններ:

Ներքին հետադարձ կապը ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ ինքնաանդրադարձն է: Ուսուցիչը և սովորողը վերլուծում են սեփական գործողությունները ՝ մատնանշելով առավելությունները ու թերությունները: Ուսուցիչն արդյունքները վերլուծելով՝ գնահատում է իր ստացված և չստացված պահերը և դրանց հիման վրա պլանավորում է հետագա գործողությունները, իսկ աշակերտներն իրենց աշխատանքին անդրադառնալով ՝ բարելավում են իրենց ուսումնառությունը: Հետադարձ կապը ապահովելու միջոցներից են բանավոր քննարկումը, գրավորը, տեսագրությունը և ձայնային հաղորդագրությունը կամ գծապատկերները:

Սենդվիչ մեթոդի կիրառություն

Արդյունավետ հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները՝ անհատական, օբյեկտիվ և նրբանկատ, պատճառների բացատրություն, ճիշտ տեղին և ժամանակին, մոտիվացիային ապահովում, կարճ և հետաքրքիր: Այս սկզբունքներն օգնում են ուսուցչի յուրաքանչյուր սովորողին ցուցաբերել անհատական մոտեցում, լինել օբյեկտիվ,

վերլուծել սովորողի կատարած քայլերը, հնարավորություն տալ սովորողին գտնել իր սխալը և շտկել այն, և հետադարձ կապի մեջ պետք է շեշտը դնել սովորողի ձեռբերումների վրա:

Հետադարձ կապի իրականացման համար կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, օրինակ **«Սենդվիչ»** մեթոդը: Այս մեթոդիի ժամանակ խոսքը սկսում ենք դրական արտահայտություններով, նշում ենք դրական կողմերը , խոսքի մեջտեղում անդրադառնում են սովորողնի կատարած քայլերին, որոնց շուրջ նա պետք է աշխատի և կատարի շտկումներ, իսկ խոսքի վերջում կարելի է այն ավարտել մոտիվացնող մտքերով, որպեսզի սովորողն ունենա դրական տրամադրվածություն:

Օտար լեզվի դասավադման մեջ «սենդվիչի մեթոդի» դեպքում մայրենի լեզվի որևէ արտահայտության՝ օտար լեզվով թարգմանված տարբերակը դրվում է մայրենի լեզվով նույն արտահայտությունների միջև և կրկնվում է այնքան, մինչև աշակերտը սովորի օտար լեզվի անծանոթ արտահայտությունը:

Բանաձևն ունենում է հետևյալ տեսքը՝

Ա2-Ա1-Ա2, որտեղ Ա2-ը մայրենի լեզվով արտահայտությունն է, իսկ Ա1-ը նույն արտահայտության համարժեքն է օտար լեզվում:

Հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն համապատասխանում է հետևյալ կանոններին.

ա/ ընկալում, երբ սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին;

բ/ ընդունում, երբ սովորողը ստացած տեղեկությունն ընդունում է և ներքին համաձայնության է գալիս դրա հետ:

գ/ հեռանկար, երբ սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները և կատարել է առաջին քայլերն իր գիտելիքները բարելավելու ուղղությամբ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հետադարձ կապը ուսուցման ուսումնառության անբաժանելի մասն է , և որքան այն արդյունավետ է , որքան շեշտադրվում է սովորողների ձեռբերումները, այնքան ավելի մեծ է հավանականությունը , որ սովորողները կբարելավեն իրենց առաջադիմությունը և կհասկանան, որ կրթությունը ձևական բնույթ չի կրում: Այժմ անդրադառնանք չափորոշիչային փոփոխություններինէ կապված 1-ից 5- րդ դասարաններում գանահատման փոփոխությունների հետ կապված կողմ և դեմ կարծիքներին: Քննարկման մասնակիցների մի մասը մտահոգություն է հայտնում, որ եթե երեխան այդ բազային տարիքում լավ կրթություն չստանա, նրա մտավոր զարգացումը հետ կման, իսկ միավորային գնահատականի հետ կապված փոփոխությունները կարող են դուրս մխել սովորողի խթանը: Իրականում երեխային միավորային գնահատական չնշելու գաղափարը բոլոր ժամանակներում էլ հուզել է մտածողներին: Այսօր կրթական գործընթացքում գերակա խնդիր է դարձել անձի հոգեբանական, բարոյական, մտավոր և ֆիզիկական առողջության պահպանումը: Մինչդեռ շատ հաճախ անհամապատասխան գնահատականը ծնում է հիասթափություն և վիրավորանք ՝ բացաբար անդրադառնալով անձի «Ես»-ի վրա , խաթարելով նրա առողջական վիճակը: Հայտնի են առողջության վրա ազդող մի շարք գործոններ՝ սոցիալական, մանկավարժական , բժշկական, էկոլոգիական և այլն:

<Սենդվիչի > մեթոդը թույլ է տալիս որ սովորողը.

ա/ թերացումներից և բացթողումներից բացի իմանա նաև իր ուժեղ կողմերը.

բ/ գործընթացի բարելավման հիմք ընդունի նաև իր առաջարկությունները,

գ/ ետ վերադառնա ՝ քննարկելու և ցուցադրելու առաջընթացը, կիսի հաջողությունները, ուրախությունն ու նաև վախը:

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագրություն

Իմ հետազոտական աշխատանքի համար ես ընտրել եմ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանը /նշեմ, որ դասարանում սովորողները ունեն անգլերենից իմացության միջին մակարդակ/ :Դասարանում սովորում են 25 աշակերտ . 15 տղա 10 աղջիկ:Հետազոտական աշխատանքի թեման քրեականությունն էր՝ անդեմ բայերը: Թեմային ըստ պլանի նախատեսված էր երկու դասաժամ:

Փորձարարական դաս 1

Առաջին դասաժամին սովորողներին ընդահուր գիտելիքներ փոխանցվեց անդեմ բայերի մասին, համեմատվեց անդեմ և դիմավոր բայրեը, այնուհետև առանձնացվեցին անդեմ բայերի տեսակները, համեմատականներ տարվեցին հայերենի և անգլերենի անդեմ բայերի միջև: Բացատրվեց նաև, որ անգլերենում կան անդեմ բայեր, որոնցից հետո գործածվում է միայն infinitive, կան բայեր, որոնցից հետո գործածվում է միայն gerund, կան բայեր, որոնցից հետո գործածվում է և infinitive, և gerund՝ առանց իմաստի փոփոխության, և կան բայեր,որոնցից հետո կարող են գործածվել և infinitive, և gerund՝ սակայն իմաստի փոփոխությամբ: Բացատրեցի present participle և past participle անդեմ բայերը և present participle և gerund-ի տարբերություններն ու նմանությունները: Աշակերտների պասիվությունից հասկացա, որ նրանք թեման լավ չընկալեցին: Այնուհետև

գործնական կիրառման ժամանակ պարզեցի, որ շատ քիչ թվով աշակերտներ կարողացան քերականության վերաբերյալ նոր գիտելիքները կիրառել գործնականում /անդեմ բայերի գործածությունը գրավոր վարժություններում և նախադասությունների մեջ/:

Դասը կազմակերպել եմ «Սենդվիչ» մեթոդով : Դասարանը բաժանել եմ 4 խմբի : 1-ին խումբը պետք է գրի այն բայերը , որոնցից հետո գործածվում է միայն geround:

2-րդ խումբը առանձնացնում է այն բայերը, որոնցից հետո գործածվում է միայն infinitive:

3-րդ խումբը առանձնացնում է այն բայերը, որոնցից հետո գործածվում է և infinitive և …. առանց իմաստի փոփոխության :

4-րդ խումբը այն բայերը , որոնցից հետո գործածվում է infinitiveև……. , սակայն տեղի է ունենում իմաստի փոփոխություն:

Բոլոր խմբերը թարգմանում են տրված բոլոր բայերը, ըստ առաջադրանքի բայերը տեղադրում են A1 կետում:

Աշկատանքն իրականացնելուց հետո խմբերը փոխանակեցին իրենց թիմային աշխատանքները , որպեսզի բոլոր խմբերը բոլոր տեսակի բայերի գործածությունը կարողանան յուրացնել:

Խմբային աշխատանքի ստուգման և դասի ավարտին պարբերաբար իրականացրել եմ ձևավորող գնահատում՝ նշելով յուրաքանչյուր աշակերտի առավելությունները և թույլ կողմերը, որոնց հետագա անրադարձի արդյունքում կունենանք նաև աշակերտների առաջադիմության բարձրացում:

Փորձարարական դաս 2

Երկրոդ դասաժամին նախնական հայտորոշման միջոցով պարզեցի , որ թեմայի շուրջ սովորողները դեռ շատ հարցեր ունեն , ու ես դեռ վերջնարդյունքին չեմ հասել: Կրկին ամփոփվեց անցած դասին մատուցած նյութը, որից հետո եզրակացեցի, որ տեսականը լավ ըմբռնել են , կարողանում են տարբերել present participle-ը և gerund-ը, կարողանում են տարբերել infinitive-ը, present participle-ը և gerund-ը, սակայն կիառման մեջ նորից դժվարանում են: Հանձնարարեցի տանը կրկնել բայերը, որոնցից հետո օգտագործվում է gerund և infinitive:

Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն(ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ):

Վերլուծություն

Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն(ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ):

Այսպիսով եթե առաջին դասաժամին , երբ առանձնահատուկ կերպով աչքի էր ընկնում աշակերտների պասիվությունը և կաշկանդվածությունը, երկրորդ դասաժամին համարյա վերացավ, ինչից հետո եզրակացրեցի, որ հասնում եմ վերջնարդյունքին, քանի որ սովորողներից շատերը մոտիվացված էին և ճիշտ էին պատասխանել: Ինձ նաև զարմացրեց մի բան, որ այդ դասարանում պասիվ աշակերտները նախկինում լուռ էին, այլ կերպ՝ չէին բարձրաձայնում իրենց կողմից չընկալված նյութի մասին, մինչդեռ հետադարձ կապի միջոցով հայտնեցին, որ մատուցված նյութի այս կամ այն մասը հասկանալի չէր, ընդ որում նրանք անկաշկանդ էին ու հետաքրքրված: Դա ինձ նույնպես ոգեվորեց, մանավանդ, որ աշակերտները իրենք էին առաջարկում շարունակել նմանատիպ հայտորոշիչ թեստերի կիրառումը:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.Մոտիվացնող տարբեր վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.հայտորոշիչ թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

Կարծում եմ ժամանակ է հարկավոր, որպեսզի հասկանանք, արդյոք առանց գնահատման ուսուցման գաղափարը մեզ կմոտեցնի ուսման մակարդակի բարելավմանը, թե՝ ոչ: Անձամբ ես կողմ եմ տարրական դասարաններում առանց միավորային գնահատման ուսուցման գաղափարին, որովհետև աշխատանքային պրակտիկայում հասկացել եմ, որ աշխակերտներն ավելի շատ կենտրոնանում են գնահատականին, քան գիտելիք ձեռբերելու վրա, ինչը մեծապես խանգարում է ուսումնառությանը:

Այնուհանդերձ այնքան էլ հեշտ չէ հրաժարվել և նվազեցնել գնահատականների կիրառման հաճախականությունը, քանի որ աշակերտները /երբեմն էլ նրանց ծնողները/ գերադասում են գնահատականները, որովհետև նրանք սովորել են գնահատականին, այնպես որ ձևավորող գնահատման ժամանակ անհրաժեշտ է խիստ հսկողություն , զգուշություն , օբյեկտիվություն: Այսպիսով, հետազոտությունից պարզ դարձավ, որ հետադարձ կապը արդյունավետ ազդեցություն է թողնում ուսման որակի վրա, բացի այդ արդյունավետ և գործուն միջոց է սովորողներին մոտիվացնելու համար:

Կարելի է նաև արձանագրել, որ ձևավորող գնահատականը նույնքան օգտակար կլինի նաև միջին դպրոցում, որքան և տարրականում:

5.Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. „Մանկավարժություն„ Մանկավարժ 2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Անգլերեն լեզու>>

3.Зинудин Абасович Абасов „ Дифференциация обучения : сущность и формы„ Журнал директор школи 2004

4.Зарецкий В. К. „Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии„ ИПИ, Москва

5.Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> „Дифференцированный подход в обучении информатике„ 2009

6,Դիլան Ուիլյամ, Փոլ Բլեք «Embedded formative assessment» 24.05.2019.

7.ԿԶՆԱԿ

8,Մ.Աստվածատրյան «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա», 1985թ.

9. Ե. Ս. Վոլկովը , հոդվածների ժողովածու, էջ 6,72: 5.https://hy.wikipedia.org

6.Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Ռուզան Ղուկասյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	9
Թեմա՝	Litle Grammarspot: Non-finite verb forms						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան*						

Դասի նպատակը՝	Զարգացնել քերականական գիտելիքները: Զարգացնել գրավոր ունակությունները
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Կկարողանա տարբերել դիմավոր նև անդեմ բայերը, կկարողանա տարբերել անդեմ բայերի տեսակները, կկարողանա անդեմ բայերը ճիշտ գործածել գրավոր խոսքում

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)

5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյար,, արժեքներ	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ ծանոթացնել սովորողներին անգլերենի անդեմ բայերի տեսակներին Infinitive Gerund, Participle: Բացատրել infinitive գործածության let make, hear, see watch, notice, help բայերի հետ active և passive voice -ում : Բացատրել gerund-ի և present participle կազմության նմանությունը	*Ինչ եք հիշում դիմավոր և անդեմ բայերի վերաբերյալ:* *Do you remamber how many non-fifinite verb forms there are in Armenian?* *Why are thery called non finite?*	***Հարցադրումների մեթոդ***

Տնային աշխատանք	*Սովորել բայերը, որոնց հետ գործածում ենք infinitive / հավելված էջ 148*

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Ռուզան Ղուկասյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	9
Թեմա՝	Litle Grammarspot: Non-finite verb forms						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան*						
Դասի նպատակը՝	Զարգացնել քերականական գիտելիքները: Զարգացնել գրավոր ունակությունները						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Կկարողանա տարբերել դիմավոր նև անդեմ բայերը, կկարողանա տարբերել անդեմ բայերի տեսակները, կկարողանա անդեմ բայերը ճիշտ գործածել գրավոր խոսքում						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)

5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյար,, արժեքներ Բարձր առաջադիմության տեր աշակերտները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ հարցադրումներ անել նախորդ թեմայի վերաբերյալ՝ անգլերենի անդեմ բայերի տեսակներին Infinitive Gerund, Participle: Բացատրել infinitive գործածության let make, hear, see watch, notice, help բայերի հետ active և passive voice -ում : Բացատրել gerund-ի և present participle կազմության նմանությունը Հետևել կատարվող	*Ինչ եք հիշում դիմավոր և անդեմ բայերի վերաբերյալ:* */համեմատական հայոց լեզվի հետ:* *Do you remamber how many non-fifinite verb forms there are in Armenian?* *Why are thery called non finite?*	***Հայտորոշիչ թեստ*** ***Մենդվիչի մեթոդ*** ***Հարցադրումների մեթոդ***

Տնային աշխատանք	*Սովորել բայերը, որոնց հետ գործածում ենք infinitive / հավելված էջ 149*